ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2020թ. թիվ 559-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 346-Ն որոշման՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 26-ի N 346-Ն որոշմամբ սահմանված անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնելու աշխատանքներն իրականացնելու, ՀՀ Լոռու մարզպետարանի կամ իր ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի (նոր նմուշի) և հատկացված պետական սեփականություն հանդիսացող հողային տարածքում առկա շենքեր շինությունների փաստացի վիճակի համապատասխանության ուսումնասիրման, անհրաժեշտության դեպքում նաև ճշտումներ իրականացնելու աշխատանքները կատարելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2015թ. հունիսի 3-ի «Հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 63 կարգադրությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հուլիսի 28
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հուլիսի 28-ի
թիվ 559-Ա որոշման

Կ Ա Զ Մ
Հանձնման հանձնաժողովի

Վ.Խաչատրյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ.

Ա.Բեջանյան - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

Է.Հախվերդյան - մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի /մարզային հողային պետական տեսչության/ պետ

Ա.Պապանյան - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Ա.Թահիրյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի ավագ մասնագետ

Ա.Մխիթարյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

28/07/2020

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ